

հետաքրքրութիւնս կը փարատեմ: Մպասաւորն հաճեցաւ եւ թող տուաւ, որ կարդամ դեղագրին մէջ... ահա կարդացածս.

«Ճերմակ գլխարկ մը,

Աջ կողմը սեւ փետուրներով զարդարուած,

Ձախ կողմը պզտիկ թռչուն մը,

Առջեւի կողմը ծաղիկ մը,

Ետեւի կողմը խնձոր մը:

(Ստորագրութիւն) բժ. Գ. Ք.

Կեանքիս մէջ բնաւ այսպիսի դեղագիր մը կարդացած չըլլալով՝ հետաքրքրութիւնս փարատուելու տեղ աւելցաւ: Հետաքրքրութիւնս իրաւունք ունէր աւելնալու, վասնզի գլխարկ մը, մանաւանդ այդ տեսակ գլխարկ մը, որ պարտէզէ մը բնաւ տարբերութիւն չունի, ո՛չ դեղահատի պէս կլլուէր, ոչ վերէն կխմուէր, եւ ոչ վարէն. ուստի սպասեցի բժշկին, որ դուրս ելնելուն պէս՝ մօտեցայ իրեն եւ ներումն խնդրելով քաղաքավարութեամբ հարցուցի.

–Արդեօք կրնա՞մ հարցունել, թէ ո՞վ էր հիւանդը:

–Քսանամեայ տիկին մը:

–Վտանգաւո՞ր է հիւանդութիւնը:

–Ոչ... չնչին բան մը... ջղային տկարութիւն մը... արիւնային զօրութիւն մը... սանկ...:

–Դեղ մը տուի՞ք:

–Այո՛... Բայց ներեցէ՛ք, աւելի երկար չեմ կարող խօսիլ, վասնզի հիւանդներ ունիմ նայելու, ըսաւ եւ մեկնեցաւ բժիշկը:

Նոյն իրիկունը գործը կը ստուգեմ եւ կ'իմանամ, որ այդ հիւանդ կինն օր մը առաջ իւր ամուսինէն գլխարկ կ'ուզէ եւ երբ կտեսնէ, որ ուզածը չէ առնուած՝ կորոշէ, որ ջղային հիւանդութիւն ունենայ:

Քանի մը օր առաջ ուրիշ կին մ'ալ մագ մնաց, որ պիտի մեռնէր, եթէ բժիշկը ժամանակին չգար: Այս հիւանդուհին ալ պարահանդէս մը հրաւիրուած էր, բայց պարահանդէսի շրջագգեստ չունենալով՝ իւր էրիկէն ուզած էր զայն: Էրիկը ժամանակ չունէր, (այսինքն դրամ չունէր, վասնզի անգործ ըլլալով՝ շատ ժամանակ ունէր) – իւր կնկան խնդիրքը կատարելու: Կինն ամօթ կը համարէր սովորական շրջագգեստով պարահանդէս երթալն եւ իրաւունք ալ ունէր, վասնզի շատ անքաղաքավար է, խաւարեալ է այն կինն, որ պարահանդէս կ'երթայ եւ իւր թեւերն ու կուրծքը ցոյց չտար արգոյ